

ՊԵՏՐՈՍ ՏԱ. ԳՈՐԴՈՆԱ

որ և Պերեդոյիևի .

Երիտասարդները , որոնք փոքր արգելքներէ անգամ շուտ մը կը լքանին , ու շաղրութեամբ կարդալով յետագայ հատուածը , կը համոզուին որ միայն խրախուսանաց միջոցով չէ որ գիտնական կ'ըլլան մարդիկ . և անոնք որ համբաւ մը հանած են՝ շատ անգամ այնպիսիները չեն , որ իրենց դաստիարակութեան միջոց ունեցեր են , այլ աւելի անոնք՝ որոնք փոյթ և յարատուութիւն ունեցեր են իրենց ուսմանցը մէջ :

Պետրոս տա Գորդոնա , խալիսոյ համանուն քաղաքի մը մէջ ծնած , նկարչութեան մեծ յաջողութիւն ունէր , բայց կարծես թէ բախտը զինքը դատապարտած էր աննշան մարդ մը ըլլալու . սակայն երկայն ատեն ինքը բախտին դէմ կուռեցաւ , առանց գիտնալու ինչ որ պիտոր ըլլար : Ֆիրբենցա քաղաքը գնաց , որ գեղեցիկ արհեստից ապաւէնն էր այն ատեն . տասուերկու տարեկան հազիւ կար , ձեռքը արհեստ մը չունէր , բոլոր ակնկալութիւնը մուրացկանութեան վրայ դրած էր . իր այս դժբախտ վիճակովն հանդերձ չքաւ , և վերջապէս որոշեց նկարիչ ըլլալու :

Բոլոր ֆիրբենցայ ճոխ գաւառին մէջ իրեն պէս խեղճ տղայ մը չէր տեսնուեր :

Գորդոնայէն այս քաղաքս եկած էր որպէս զի Սագգէդդի ծիրանաւորի խահակերոցին սպասաւոր ըլլայ , ուստի գնաց փնտռելու այն տունը : Հոն իր մէկ պզտիկ հայրենակիցը զինքը շատ սիրով քովը ընդունեցաւ , և իր կերակրին բաժինէն անոր ալ մասն հանեց , և զինքը խրախուսեց . իր խցին կէսն ալ իրեն շնորհեց . խոստացաւ ալ , որ զինքը հանգիստ իր քովը պահէ , և թէ խահակերոցին աւելցածներովը կրնան հոն միատեղ ապրել : Ասով իր կենացը առաջի հարկաւոր բանին ապահովալով՝ սիրտը հանգստացաւ , և սաստիկ եռանդեամբ զինքը նկարչութեան տուաւ .

ուր ցուցած յառաջադիմութիւնը իր զրկմանցը բաւական հատուցումն էր . յիրաւի այս խեղճ տղան հրաշալիք մ'էր . ամեն բանէ զուրկ , և ոչ իրեն առաջնորդող մը ունէր . բայց ինքը առանց թուլնալու շարունակ կ'աշխատէր , և օրուան մէջ հազիւ քանի մը վայրկեան հանգիստ կ'առնէր . միտքը ուժով էր ինչպէս նաև իրեն բնիկ հանճարը : Իր երիտասարդ բարեկամը ազնուակախութիւնը ամենեւին ձեռքէ չթողուց . ինչ որ ձեռքը էյնար , Պետրոսին ալ մաս կը հանէր , և ասիկայ ալ իր ամեն նկարները խնամքով անոր կը տանէր՝ քիչ ատենէն իրենց խցին պատերը նկարներով ծածկուեցան :

Շատ անգամ պաշար կ'առնէր և կ'երթար հեռու տեղուանք աշխատելու , և թէ որ զիչերը վրայ հասնէր՝ տեղ մը կը քնանար , և կը սպասէր երկրորդ օրուան դարձեալ աշխատութիւնը առաջ տանելու համար :

Անգամ մը իրեն տունը չգտնուած ժամանակ , բարեբախտաբար իր նկարներէն խել մը Սագգէդդի ծիրանաւորին ձեռքը ինկան : Անոնց յարգը լաւ ճանչնալով ծիրանաւորը՝ հարցուց թէ ո՞վ նկարած էր զանոնք . և շատ զարմացաւ երբոր իմացաւ որ աղքատ տղու մը գործ էր , զոր իր խոհակերոցին սպասաւորներէն մէկը երկու տարիէ 'ի վեր իր քովը կը պահէր : Ուզեց մէկէն 'ի մէկ տեսնալ այս կարգէ դուրս տղան . ամեն կողմ փնտռել տուաւ . տասնըհինգ օր կար որ պալատը չէր երևցած . վերջապէս իմացուեցաւ որ վանք մ'է եղեր , ուր մարդասէր կրօնաւորները Ռափայելի մէկ պատկերին օրինակը գծագրելուն զմայլած՝ զինքը ընդունելէն զատ՝ իրեն խցիկ մը և սեղանի վրայ տեղ մը տուած էին : Պետրոս բերուեցաւ ծիրանաւորին քով , որ յարգանք ընդունեցաւ և իրեն թոշակ ալ կապեց , և զինքը Հովմայ երևելի նկարչաց վարժարանը դրաւ :

Ասիկայ այնպէս աղէկ սիրտ ունէր , որ չէր կրնար մոռնալ իր այն բարեկամը՝ որ իրեն այնչափ օգներ էր աղքատութեա .

նը միոյ, երբոր քաջ նկարիչ մ'եղաւ
և բախտը շինեց. շատ տեսակ բարեք-
ներ ըրաւ այն մարդուն՝ որ իրեն այս
բախտի հասնելուն պատճառ եղած էր :

Մորուքի վրայ գիտելիք .

Մորուք կ'ըսուի մարդու գունչին
ու երեսին վրայ բուսած մազերը : Այլ
և այլ ազգաց մէջ զանազան սովորու-
թիւններ եղած են մորուքի կողմանէ :
Թաթարները բարեպաշտութիւն կը սե-
պէին մորուք ձգելը, անանկ որ Պար-
սից դէմ մեծ պատերազմ ըրած են և
տեննոր՝ զանոնք անկրօն սեպելով իրենց
պէս մորուք չիձգելնուն համար :

Յոյները միշտ մորուքուոր եղած են
ինչուան Աղէքսանդրի ատենը, անանկ
որ՝ առջի մորուքը սափրողին անունը
կորսիս մնաց, այսինքն գերծեալ կամ
Անմորուս, ինչպէս միտալներու վրայ
կոխած կայ : Պլուտարքոս կը պատմէ որ
Աղէքսանդր հրամայ մակերոնացոց մի-
րուքնին սափրել, վախնալով չըլլայ թէ
թշնամիները զանոնք մորուքներէն
բռնեն : Աս հրամանին պատճառը ինչ
որ է՝ թող ըլլայ, բայց աս ստոյգ է որ
իրեն հօրը Փիլիպպոսի, ու Ամինտաս
ու Արքեշայոս իր նախորդներուն զբա-
մները մորուքուոր են :

Պլինիոս հռոմայեցոց համար կ'ըսէ
որ 454 Հռոմայու թուականին սկսան
մորուքնին սափրել, ու ան ատենը Պո-
ղոս Տիկինիոս խել մը սափրիչ հետը
բերաւ Սիկիլիայէն ՚ի Հռոմ : Աս ալ
կ'եւելցընէ որ Սկիպիոն սափրիկեցին առ-
ջինը եղաւ, որ ամեն օր մորուք սափրե-
լու սովորութիւնը խոթեց : Առջի ան-
գամ մորուքնին սափրելու օրը՝ այցե-
լութեան կու դային ազգականներնին
ու բարեկամնին : Տասնչորս առջի ինք-
նակալները ինչուան Աղբիանոս անմո-
րուս էին. Աղբիանոս սկսաւ մորուքը
ձգել երեսին վրայի սպիքները ծածկե-
լու համար, ինչպէս Պլուտարքոս կը
պատմէ :

Ատեննոր ազնուականներն ու մեծերը

զակրներնուն մորուքը առջի անգամ
իրենց վիճակին համեմատ անձանց
սափրել կու տային, ու սափրողները ա-
նոնց կնքահայրը կ'ըսուէին : Ետքը ու-
րիշի մորուքին դպչողն ալ կնքահայր
կը սեպուէր. ուստի Սլարիկոսի ու կլո-
դովիոսի մէջ եղած դաշնագրութեանը
մէկ պայմանն ալ աս էր որ՝ Սլարիկոս
կլոդովիոսին մորուքը բռնէ, ու անոր
կնքահայր ըլլայ :

Եկեղեցականաց մորուքնին վրայ ալ
ատեն ատեն այլ և այլ սովորութիւն-
ներ եղան : Երբոր արևմտեան գղերին
մէջ ամեն օր մորուքնին քերթելու զեղ-
ծումը մտաւ, մեծաւորները հրաման
հանեցին որ ամենքը մորուք ձգեն. բայց
երբոր մորուքներնուն չափազանց խը-
նամբ ընօղներ ալ սկսան ըլլալ, նորէն
հրաման եղաւ ամենքն ալ մորուքնին
սափրելու : Բայց արևելեան գղերը պա-
հեց միշտ մորուք ձգելու սովորութիւ-
նը. ու ինչուան հիմայ ալ եկեղեցա-
կան մը առանց մորուքի իրենց աչքին
աղէկ չերևար : Քահանայի մը մորուքը
վար առնել ամենէն ծանր պատիժնե-
րուն մէկն է արևելք :

Քանի մը ազգաց մէջ մորուք ձգելը
սուգի նշան էր, ուրիշ տեղեր ալ սգա-
ւորները մորուքնին կը սափրէին : Սի-
նէացիք երկան մորուքը կը սիրեն, բայց
ընտելիւնը գիրենք կարճ մորուքը ըրած
է. այսու ամենայնիւ մորուքներնուն
շատ հոգ ու խնամ կ'ընեն : Ռուսները
ինչուան ասկէց առջի դարը միշտ մո-
րուքուոր եղած են. անցած դարուն մէջ
կայսրը հրամայեց որ ամենքնին մորուք-
նին սափրեն, ու շատերը չիհնազան-
դելնուն համար՝ խել մը սափրիչ խըր-
կեց, բռնի սափրել տուաւ մորուքնին :
Ռակեբերան Պարսից թագաւորներուն
համար կ'ըսէ որ մորուքնին ոսկի թե-
լերով կը հիւսէին : Գաղղիոյ թագաւոր
ներէն ոմանք ալ մորուքնին կը ժող-
վէին ու ոսկիով կը կապէին. ետքը ա-
նոնք ալ վերուցին մորուքը, ինչպէս բո-
լոր Եւրոպացիք ալ. անանկ որ՝ ասկէց
երսուն քառսուն տարի առաջ Եւրո-
պայի մէջ, Հրեաներէն ՚ի զատ, զաբու-